

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ, ՈՐ Ի ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ

Սիրելի Սրբազան,

Ձեր ծննդեան եօթանասունհինգ եւ վարդապետ ձեռնադրութեան յիսուներորդ տարեդարձերի ուրախ առիթով Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Այսօր՝ տարիների հեռուից ուրախ ենք անդրադառնալու շնորհաշատ եւ բազմավաստակ հոգեւորականիդ ազգօգուտ ու եկեղեցաշէն երկարամեայ գործունէութեանը: Մայր Եկեղեցու անդաստանում առաջին քայլերը կատարելով երջանկայիշատակ Գեւորգ Զ եւ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետների հայրական բարեխնամ հոգածութեան ու առաջնորդութեան ներքոյ, Դուք դարձաք բարի հովիւ ու նուիրեալ ծառայ Ռումիանիայում եւ Բուլղարիայում բնակեալ մեր ժողովրդի համար՝ Աստուծոյ կենաց խօսքի անյոգնաբեկ քարոզչութեամբ աներեր պահելով բարեպաշտ հայորդեաց «զհաւատոցն շինուած» եւ «զսէրն հայրենեաց»:

Առիթ ունեցել ենք Հովուապետական այցով լինելու Ռումինիայի եւ Բուլղարիայի Տիրախնամ թեմերում եւ բերկրանքով ականատես դարձել առաջնորդական առաքելութեան մէջ արձանագրած Ձեր ձեռքբերումներին, ազգային, կրթական եւ բարեսիրական իրագործումներին եւ այն յարգանքին ու հեղինակութեանը, որ արժանապէս վայելում էք Դուք՝ Ձեր եր-

կարամեայ արդիւնաւոր ծառայությամբ: Վստահ ենք, որ Ձերդ Սրբազնութեան հարուստ փորձառութեան շնորհիւ Տիրախնամ թեմերը Ռումինիոյ եւ Բուլղարիոյ պիտի շարունակեն շէնանալ ու պայծառանալ՝ ի մխիթարութիւն բարեպաշտ մեր ժողովրդի:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեր Եկեղեցուն պարգեւել է Ձեզ պէս նուիրեալ սպասաւոր: Ձեր երկարամեայ նախանձախնդիր ծառայութեամբ Դուք լաւագոյն օրինակ էք երիտասարդ մեր հոգեւորականաց համար:

Ձեր յորելեանների բերկրաշատ առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Օրհնութեան այսու գրով յղում ենք Ձեզ Մեր սէրն ու գնահատանքը՝ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալի խնամքը հայցելով Ձեզ եւ հովանին՝ Ձեր եկեղեցաշէն գործունէութեանը:

Թող Ամենակալ Տէրը քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր պարգեւի Ձեզ եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 6-ն Ապրիլի
Յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 551